«ԳԵՐՄԱՆԵՐԵՆ»

9-րդ դասարանի ավարտական քննության ուղեցույց

ԹԵՍՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Հ/Հ	Առաջադրանքները ըստ ներկայացման ձևի	Ենթաառաջադրանքների քանակը	Առավելագույն միավորը
1	Ընտրովի պատասխանով	18	18
2	Կարճ պատասխանով	14	14
3	Ընդարձակ պատասխանով	1	3
	Ընդամենը	33	35

ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՆՅՈՒԹԸ

1. Բառապաշար
2. Բառակազմություն
3. Ձևաբանություն
4. Շարահյուսություն
5. Թարգմանություն
6. Կապակցված խոսք գրելու հմտություն

ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թեստը բաղկացած է 9 առաջադրանքից (33 ենթաառաջադրանք):

1-4-րդ առաջադրանքները (18 ենթաառաջադրանք) ընտրովի պատասխանով առաջադրանքներ են: Ընտրովի պատասխաններով ենթաառաջադրանքների յուրաքանչյուր ճիշտ պատասխանին տրվում է 1 միավոր:

Առաջին առաջադրանքում տրված է տեքստ և դրա վերաբերյալ 5 ենթաառաջադրանք:

Երկրորդ առաջադրանքը կազմված է 7 նախադասությունից, որոնցով ստուգվում են քերականական տարբեր կարգերից սովորողի գիտելիքները:

Երրորդ առաջադրանքը կազմված է 3 նախադասությունից, որոնցում բաց է թողնված շաղկապը: Պետք է տրված 4 տարբերակից ընտրել համապատասխան շաղկապը:

Չորրորդ առաջադրանքի միջոցով ստուգվում է սովորողի ճիշտ թարգմանելու կարողությունը: Տրված է 3 նախադասություն և յուրաքանչյուր նախադասության համար թարգմանության 4 տարբերակ, որոնցից պետք է ընտրել միակ ճիշտ տարբերակը:

5-8-րդ առաջադրանքները (14 ենթաառաջադրանք) կարճ պատասխան պահանջող առաջադրանքներ են: Կարճ պատասխան պահանջող ենթաառաջադրանքների համար

պետք է գրել պահանջվող պատասխանը: Յուրաքանչյուր ճիշտ պատասխանին տրվում է 1 միավոր:

Հինգերորդ առաջադրանքում տրված է 5 նախադասություն, որոնցից դուրս են բերված բայերը: Բայերը պետք է տեղադրել պահաջվող ժամանակաձևերով:

Վեցերորդ առաջադրանքը կազմված է 3 նախադասությունից: Այն հնարավորություն է տալիս ստուգելու քերականական տարբեր երևույթներ: Անհրաժեշտ է նախադասության մեջ գտնել ընդգծված բառերից ավելորդը:

Յոթերորդ առաջադրանքը կազմված է 3 բարդ նախադասությունից, որոնցում բաց է թողնված հարաբերական բառը: Պետք է համապատասխան հարաբերական բառը գրել ճիշտ հոլովով:

Ութերորդ առաջադրանքում տրված է 3 նախադասություն՝ ընդգծված բառերով: Ընդգծված բառերի համար պետք է գրել համապատասխան հարցական բառը:

Իններորդ առաջադրանքը ընդարձակ պատասխան պահանջող առաջադրանք է: Առաջադրանքի կատարման համար տրվում է առավելագույնը 3 միավոր: Առաջադրանքում տրված 10 բառերից առնվազն 7-ով պետք է կազմել կապակցված տեքստ (5-7 նախադասություն):

Առաջադրանքի կատարումը գնահատվում է հետևյալ չափանիշներով.

1. 3 միավոր տրվում է այն դեպքում, եթե տեքստը ունի ամփոփ, ավարտուն տեսք և թույլ է տրված մինչև 3 ուղղագրական, բառագործածական կամ քերականական սխալ:
2. Եթե տեքստը համապատասխանում է տրված պահանջին, բայց թույլ է տրված 3–5 ուղղագրական, բառագործածական կամ քերականական սխալ, հանվում է 1 միավոր:
3. Եթե տեքստը համապատասխանում է տրված պահանջին, բայց թույլ է տրված 6-8 ուղղագրական, բառագործածական կամ քերականական սխալ, հանվում է 2 միավոր:

Կապակցված խոսքը չի գնահատվում, եթե՝

- խոսքը չունի ամփոփ, ավարտուն տեսք,
- նախադասությունների քանակը 5-ից պակաս է,
- գործածված չեն տրված բառերից առնվազն 7-ը,
- թույլ է տրված 9-ից ավելի ուղղագրական, բառագործածական կամ քերականական սխալ:

Ընտրովի և կարճ պատասխանները պետք է անցկացնել պատասխանների ձևաթուղթ: Ընտրովի պատասխանով ենթաառաջադրանքների 4 պատասխանից պետք է ընտրել մեկը և «X» նշանով նշել ձևաթղթում:

Կարճ պատասխան պահանջող ենթաառաջադրանքների պատասխանները պետք է գրել ձևաթղթի մեջ:

Ձևաթղթում տրված է սխալ նշված պատասխանը ուղղելու երեք հնարավորություն, երկուսը՝ ընտրովի պատասխանով առաջադրանքների համար, մեկը՝ կարճ պատասխանով առաջադրանքների համար: Եթե որոշեք փոխել ընտրովի պատասխանով առաջադրանքի պատասխանը, ապա «**Սխալ նշված պատասխանները փոխելու տեղ**» դաշտում գրեք առաջադրանքի համարը և կատարեք ուղղումը:

Ամփոփիչ վերջնական միավորը ստացվում է լուծված առաջադրանքների միավորների գումարից (առավելագույնը 35 միավոր), որը սանդղակավորվում է: